ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐՏԵՄ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Բազմամյա տքնաջան աշխատանքի շնորհիվ ավստրիական արխիվների ֆոնդերից ժողովվել է ավստրո-հունգարական պաշտոնյաների շուրջ 3300 էջ կազմող զեկուցագրերը՝ 1914-ից մինչև 1918թ. Հայկական հարցի շուրջ և այժմ դրանց հատընտիրը հայերեն թարգմանությամբ ներկայացվում է գիտական հասարակայնությանը:

Այս վավերագրերի իսկությունն, անտարակույս, կասկած չեն հարուցում. Օսմանյան կայսրության հետ դաշնակից պետություններից մեկի պաշտոնյա զեկուցողներն, անշուշտ, դրանք հօգուտ հայերի չեն «գունազարդել»:

Հայկական բարեփոխումների ծրագիրը ստորագրելուց մի քանի ամիս հետո՝ 1914թ. օգոստոսին բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Արդեն այն ժամանակ ակնհայտ էր, որ երիտթուրքերի՝ հայերի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը նպատակաուղղված է հայ ժողովրդի բնաջնջմանը:

Հայերը մեծ վտանգ էին ներկայացնում Օսմանյան կայսրության համար: Եվրոպայի քրիստոնյաները շարունակ դուրս են մղել թուրքերին դեպի Արևելք: Թուրքերը նրանց համար բարբարոս և կուլտուրայից զուրկ ժողովուրդ էին, որոնք, համատարած, ուր էլ ոտք էին դնում, ավերածություններ և մահ էին սփռում: Օսմանցիների երբեմնի մեծ և հզոր կայսրությունը քայքայվում էր: Նրանք քրիստոնյաներին ատում էին այն պատճառով, որ քրիստոնյաներն, իբր, հնարավոր բոլոր միջոցներն օգտագործում էին նրանց հաշվին ավելի շահ ստանալու համար: Այդ ատելությունը պարպում էին թույլերի, այսինքն հայերի վրա: Երբ նրանք նույնիսկ համագործակցում էին հայերի հետ, ինչպես այդ պատահեց սուլթանին գահազրկելու ժամանակ, հայատյացությունը միշտ էլ առկա էր: Մպասվում էր միայն պատեհ պահի՝ հայերին «վնասազերծելու» համար: Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով երիտթուրքերի կառավարությանը հնարավորություն ընձեռվեց յուրովի լուծելու Հայկական հարցը, այն լուծել՝ հայ ժողովրդին բնաջնջելու միջոցով: Եվ երբ թուրքերի իշխանության ներքո գտնվող Հայաստանում այլևս հայ չկար, սոսկ ժամանակի հարց էր, որպեսզի Հայաստանը, որը նշված էր Փոքր Ասիայի բոլոր քարտեզնե-

ղում, այդ քարտեզներից չքանա: Այն եզակիները, որոնք իրենց բազմաթիվ ներկայացուցչություններով, սպաներով հանդերձ, ներկայացված էին Թուրքիայում և կարող էին հայկական կոտորածների դեմ հանդես գալ (մասնավորապես՝ Ավստրո-Հունգարիան և Գերմանիան), Թուրքիայի դաշնակիցներն էին: Ավստրո-Հունգարիան և Գերմանիան 1914թ. օգոստոսի 8-ին Կոստանդնուպոլսում կ. և թ. (Ավստրո-Հունգարիայի կայսերական և թագավորական. – ծ. հ., այսուհետ՝ կ. և թ.) զինվորական կցորդ Պոմիանկովսկին հեռագրում է Վիեննա. «Բանակի գլխավոր հրամանատարն է պաշտպանության մինիստր Էնվեր փաշան: Կովկաս զորախմբի հրամանատարն է գեներալ Հասան Իզեթ փաշան: Բանակների գլխավոր շտաբների և բոլոր կորպուսների շտաբների պետերն ամբողջապես գերմանացի սպաներ են»:[1]

1914թ. նոյեմբերի 19-ին Պալավիչինին գրում է. «Ավստրո-Հունգարիան և Գերմանիան այսօր Թուրքիան իրենց իշխանությանն են ենթարկել: Այն, որ Գերմանիայի դեպքում ավելի մեծ չափով է դա դրսևորվում, բացատրվում է այն պարագայով, որ վերջինս իր ձեռքում է պահում թուրքական բանակը և նավատորմը: Դրանից զատ, գերմանական կառավարության տրամադրության տակ գտնվող հույժ նշանակալից դրամական միջոցները հնարավորություն են ընձեռում այստեղ իրենց կամքը իրականացնել (...) Արդեն այժմ բազմաթիվ հանգամանքներից երևում է, որ գերմանացիները դիտում են Թուրքիան որպես իրենց գործունեության բացառիկ բնագավառ և յուրաքանչյուր պարագայում Թուրքիային տեր են ներկայացնում»:[2]

Սակայն Եվրոպայի քրիստոնյա երկու մեծ տերություններն այլ շահեր ունեին քան հայ ժողովրդին ծրագրված և, ինչպես ավստրիական մի զեկուցագրում նշված է, «բավականին այլանդակ և ոչ սիստեմատիկ իրականացվող» ցեղասպանությունից փրկելը:[3]

Վավերագրերը վկայում են, որ հայերի հալածանքները սկսվել էին արդեն 1915թ. հունվարին: 1915թ. հունվարի 26-ի մի զեկուցագրում նշված է. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն: Քրդերը վերսկսել են կոտորել հայ գյուղացիներին, բայց առանձին գործողություններով, որ կասկած չհարուցեն, թե հայերի կոտորածներն ամենուրեք են իրականացվում»:[4]

Վավերագրերն, այնուհետև, վկայում են, որ հայերին հալածելու հրամանն երիտթուրքական կառավարությունն էր արձակել:

1915թ. հունիսի 24-ին Պալավիչինին զեկուցում է Վիեննա. «Ոչ մի կասկածի ենթակա չէ այն, որ հայերի հանդեպ կառավարության գործելակերպը սնանկ է...»:[5] 1915թ. հոկտեմբերի 8-ին կ. և թ. բանակի գլխավոր հրամանատարությունը զեկուցում է Վիեննա. «Թվում է, թե այս օրենքը (հայերին հարկադրաբար վերաբնակեցումը. - ծ. թ.) ընդհանրապես ստեղծվել է սոսկ նրա համար, որ օրենքի պաշտպանության ներքո կարողանան իրականացնել հայերի բնաջնջումը»:[6] 1917թ. մարտի 24-ին Պալավիչինին զեկուցում է Թուրքիայի տնտեսության մինիստր Ջալիլ բեյի հետ ունեցած զրույցի մասին. «... Մինիստրը հայերի հալածանքները բնորոշեց (...) որպես նախկին կառավարության շատ մեծ սխալ: Ամբողջ ազգեր հալածելը և բնաջնջելու ցանկությունը քաղաքական տեսակետից մեծ սխալ է եղել»:[7]

Բայց նաև հայերի ջարդերի ձևերն ու եղանակներն են նկարագրված բազմաթիվ վավերագրերում. 1915թ. սեպտեմբերի 30-ին կ. և թ. դեսպանության խորհրդական Տրաուտմանսդորֆը գրում է Վիեննա. «Տղա-

մարդիկ մեծ մասամբ սպանվել են, կանանց և երեխաներին չնչին գնով վաճառել են թուրքերին: Նրանք, որոնց հետիոտն ուղեկցել էին երկրի խորքերը, խիստ փոքր տոկոսով հասան իրենց նպատակին, քանզի ճանապարհին թերսնումից, հիվանդությունից և հյուծվածությունից վախճանվել են: Այսօր այլևս չի կարելի ժխտել, որ թուրքերն, անտարակույս, հայրենիքի դավաճանության և ապստամբության իբր տեղի ունեցած բազմաթիվ դեպքեր օգտագործել են որպես պատրվակ հայոց ցեղի բնաջնջումն իրականացնելու համար, մի իրողություն, որը, թվում է, նրանց մեծավ մասամբ հաջողվել է»:[8]

Հայերին բռնությամբ մահմեդականացնելու վերաբերյալ 1916թ. մարտի 3-ի զեկուցագրում նշված է. «միայն իսլամ ընդունելը կարող է խեղճ զոհերին (...) աքսորից, այսինքն հավաստի մահից, փրկել»:[9]

Վիճելի հարցերից մեկը կոտորածների զոհերի թվաքանակն է:

Ավստրիական վավերագրերում մինչև 1915թ. դեկտեմբերը կոտորված հայերի թվաքանակը նշված է մոտ մեկ միլիոն. «Այլ հաշվարկումների հետ համեմատելով, իմ երաշխավորյալ անձը հավաստիացնում է, որ մոտ մեկ միլիոն հայ է բնաջնջվել»:[10]

(Զինադադարից հետո իշխանության եկած թուրքական կառավարությունը խոսում էր 800000 սպանված հայերի մասին):[11]

Ավստրիական վավերագրերն ի հայտ են բերում նաև մի այլ խնդիր՝ Թուրքիայի դաշնակիցների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հանցակից լինելու խնդիրը: Փաստն այն է, որ ինչպես Գերմանիայի, այնպես էլ Ավստրո-Հունգարիայի դեսպանները լրջորեն չեն հանդես եկել ի պաշտպանություն հայերի: Եվ նույնիսկ երբ նրանք նման քայլերի էին դիմում, ապա դա անում էին, ինչպես այդ ընդգծել է Պալավիչինին, Թուրքիայի հանդեպ «բարեկամական ձևով»:

Հօգուտ հայերի՝ գերմանացիների ջանքերի մասին, մասնավորապես՝ երբ Յոհաննես Լեփսիուսը 1915թ. օգոստոսին գտնվում էր Կոստանդնուպոլսում, Պալավիչինին գրել է. «Երբ Հայկական հարցը և Թուրքիայի գործելակերպը քննության ենթարկվի, Գերմանիայի դեսպանի երեկվա քայլը նրան ակնհայտորեն պատեհություն է ընձեռելու վկայակոչել, որ իրենք թուրքական կառավարությանը հայերի նկատմամբ նրանց քաղաքականության հետևանքների վերաբերյալ զգուշացրել են»:[12]

Հայերին կոտորելու ոճրագործության մեջ գերմանացիների հանցակից լինելու մասին հստակորեն վկայում են հետևյալ երկու փաստաթղթերը. 1915թ. հոկտեմբերի 22-ին կ. և թ. հյուպատոս Կվիատկովսկին զեկուցում էր Տրապիզոնից. «Գերմանական հուսալի աղբյուրից տեղեկացել եմ, որ հայերին վնասազերծելու առաջին խթանը, իհարկե ոչ փաստորեն իրականացված եղանակով, ծայր է առել գերմանական կողմից»:[13]

1915թ. նոյեմբերի 10-ին կ. և թ. հյուպատոս Նադամլենցկին զեկուցում է Աղրիանապոլսից. «Ցավոք մինչև օրս ինձ համար հնարավոր չէր իմ երաշխավորյալ անձին դրդել հիշատակել այն անձանց անունները, «վքեր ուղղակի հայտարարել են, որ Գերմանիան կամեցել է հայերի հալածանքները: Նա կարողացավ ինձ միայն հավաստել, որ խոսքը վերաբերվում է մի ազդեցիկ անձնավորության, որը Կոմիտեի հետ սերտ առնչություն ունի և բոլոր գաղտնիքները գիտի»:[14]

Սակայն Թուրքիայում կային կ. և թ. որոշ ներկայացուցիչներ, որոնք քննադատաբար էին վերաբերվում հայերի հանդեպ ավստրիական

կառավարության գործելակերպին: 1916թ. մարտի 8-ին կ. և թ. հյուպատոս Նաղամլենցկին գրում էր Պալավիչինին. «Խեղճ բնակչությունը (...) իր սարսափի և անսահման կարիքի մեջ հարցնում է, թե ի՞նչ են անում Թուրքիայի դաշնակիցները: Ի՞նչ են անում Ավստրո-Հունգարիան և Գերմանիան: Ինչո՞ւ նրանք չեն միջամտում՝ ինչո՞ւ նրանք չեն օգնում (...): Ձերդ գերազանցություն (...) մի՞թե մենք հնարավորություն և զորություն չունենք վերջ դնելու այդ բռնություններին, որոնք սև ստվեր են գցում մեր հեղինակության վրա»:[15]

1917թ., ինչպես հայտնի է, տեղի ունեցավ հեղափոխություն Ռուսաստանում: Ավստրիական դիվանագետները զեկուցում էին, որ Փետրվարյան հեղափոխությունը ծրագրվել և իրագործվել է Անգլիայի կողմից: Այդօրինակ դատողության հիմք է տալիս 1918թ. մարտի 14-ին Կոստանդնուպոլսից ուղարկված մի փաստաթուղթ, որտեղ նշված է, որ բոլշևիկները մի գաղտնի փաստաթուղթ են հրապարակել, որտեղ զեկուցվում էր, որ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովը 1916 թվականին հանդես է եկել Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու օգտին:[16] Ռուսների սեպարատ հաշտությունը Թուրքիայի հետ կունենար ծանր հետևանքներ Անտանտի դաշնակից պետությունների համար: 1917թ. մայիսի 20-ի թվակիր վավերագրում զեկուցվում է այն մասին, թե ինչպես է Պետերբուրգում Անգլիայի դեսպանը զգուշացրել ռուսական կառավարությանը, երբ Կերենսկու կառավարությունը խաղաղության հասնելու տրամադրություններ էր դրսևորում. «Դուք ոչ մի խաղաղություն չեք ունենա, քանզի եթե դուք Կենտրոնական տերությունների հետ այդպիսին կնքեք, ապա ձեր վրա կհարձակվեն անգլիացիները, ճապոնացիները և չինացիները, և ձեզ համար ավելի լավ է ներկա պատերազմի մեջ մնալ, որի դեպքում, հնարավոր է, մեզանից կարող եք որոշ բան ստանալ, քան մի այլ ռազմաճակատում նորը սկսել, որը, բնականաբար, ներկայիս պայմաններում առանձնապես ծանր կլինի»:[17]

Վավերագրերն, այնուհետև, բացահայտում են Կենտրոնական տերությունների կովկասյան քաղաքականությունը, Թուրքիայի օգնությամբ այն անեքսիայի ենթարկելու, տնտեսապես Կովկասը շահագործելու նրանց հավակնությունները: Դրա համար Կովկասը պիտի տարանջատվեր Ռուսաստանից: Դրան հասան գերմանացիները, երբ նրանց վրացի բարեկամներն Անդրկովկասի կառավարության մեջ անսահմանափակ իշխանություն ձեռք բերեցին: 1918թ. ապրիլի 22-ին Թիֆլիսում նրանք հռչակեցին անդրկովկասյան դաշնակցային դեմոկրատական հանրապետություն, որի կազմում ընդգրկված էին Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը: Մի քանի շաբաթ անց՝ մայիսի վերջին, անդրկովկասյան հանրապետությունները հռչակեցին իրենց անկախությունը: Դրա հետևանքով Անդրկովկասը վերջնականապես անջատվեց Ռուսաստանից: Այժմ արդեն Կենտրոնական տերությունները կարող էին իրենց մտադրություններն իրականացնել. Թուրքիան պիտի ներխուժեր Կովկաս: Հայերը չէին կարող կասեցնել թուրքերի ներխուժումը հայկական նորաստեղծ հանրապետություն: Երբ թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստանի հանրապետության տարածք, Գերմանիային և Ավստրո-Հունգարիային բողոքում էին անգամ բոլշևիկները: Թուրքերի Կովկաս ներխուժելու հետևանքով ոչ միայն խախտվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրն, այլև սկսվեց հայերի մի նոր ցեղասպանություն:

Գերմանիան և Ավստրո-Հունգարիան յուրովսանն բողոքում էին

Թուրքիային: Գերմանացիների երկակի խաղն ակնհայտ է դառնում Պալավիչինիի 1918թ. մայիսի 30-ի զեկուցագրից.

«... Մեծ վեզիրը [Թալեաթ փաշան], դրանից զատ, ավելացրեց, որ կոմս Բեռնստորֆը ժամանակին հստակորեն պարզաբանել է անդրկովկասյան կառավարությանը տված վերջնագիրը և որ գերմանական գերագույն հրամանատարությունը «սահմանների ստույգ ճշգրտման» հետ, որի հետևանքով մի տարածաշրջան՝ մինչև Ջուլֆա խոստացվել է Թուրքիային, լրիվ համաձայն է: Նաև թուրքական բանակի առաջխաղացումը տեղի է ունեցել գերմանական բանակի գերագույն հրամանատարության համաձայնությամբ և, նույնիսկ, գերագույն հրամանատարության ցուցումով»:[18]

Թուրքերի Հայաստան ներխուժելու և հայկական կենսականորեն կարևոր տարածքները գրավելու հետևանքով էլ ավելի սահմանափակվեց Հայաստանի տարածքը: Այդ պատճառով ծագած կոնֆլիկտում Գերմանիան հետևյալ դիրքը գրավեց. «Բաթումի հաշտության պայմանագրով Թուրքիան հայերից ևս Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշած սահմաններից ավելի՝ կարևոր նշանակության տարածաշրջաններ է գավթել: Երկիրը, որը մնացել է հայերին, շատ փոքր է բնակչությանը կերակրելու համար: Հարյուր հազարավոր հայեր փախել են Վրաստան կամ լեռները: Մենք, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող, պարտավոր ենք պահանջել, որ Թուրքիան հետ քաշվի դեպի Բրեստի նշված սահմանները և փախստական հայերին հնարավորություն ընձեռի վերադառնալ իրենց բնակավայրերը: Թուրքիային խնայելու համար հանձնարարվում է այդօրինակ պահանջից հրաժարվել և սահմանափակվել սոսկ թուրքական գործողությունների դեմ առարկությամբ, սակայն առանց այդ առարկություններին հետևող գործողությունների»:[19]

Ավստրիական վավերագրերն ուշագրավ են նաև Լեռնային Ղարաբաղի ներկա հակամարտության առումով, քանզի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը սկսվել էր դեռ 1918թ.:

1918թ. օգոստոսին բարոն Ֆրանկենշտայնը՝ կ. և թ. պատվիրակը Կովկասում, զեկուցում է Թիֆլիսից. «Ղարաբաղի լեռնային մասում 250000 հայ է բնակվում և ընդամենը 20.000 մահմեդական: Չնայած դրան Թուրքիան այդ տարածքը դիտում է որպես աղրբեջանական շրջան»:[20] Ու նաև՝ «վերջերս թուրքերը կամենում էին Աղրբեջանից զուտ հայկական Ղարաբաղ մարզը ներխուժել...»

Մենք փորձեցինք այս հակիրճ առաջաբանում շեշտել ավստրիական վավերագրերի նշանակությունը՝ Հայկական հարցի առումով: Այս վավերագրերի հիման վրա մենք առաջ ենք քաշում հետևյալ թեզը:

Այն անսահման աջակցությունը, որը Գերմանիան և Ավստրո-Հունգարիան ցույց տվեցին սուլթան Աբդուլ Համիդին և երիտթուրքերին, վերջիններիս հայերի հանդեպ տարվող քաղաքականության կապակցությամբ, նպաստեց 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությանը, հայերի հալածանքներին և կոտորածներին և նրանց տարագրությանն իրենց հայրենիքից:

Գերմանական և ավստրիական պատմագրության մեջ Հայաստանին առնչվող հարցերում առկա է մի բացթողում, որի ճշգրիտ իմաստավորումը կարևոր նպաստ կբերի այդ երկրների ժողովուրդների փոխըմբռնմանը:

Արտեմ Օհանջանյան
Մագիստրոս դոկտոր

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Wien, Kriegsarchiv (այսուհետ՝ KA), Armeeoberkommando Nachrichtenabteilung (այսուհետ՝ AOK NA), Karton 3509.
[2] Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (այսուհետ՝ HHSTA), Politisches Archiv (այսուհետ՝ PA), I 521.
[3] Wien, HHSTA Presseleitung (այսուհետ՝ PL) 245.
[4] Wien, HHSTA PA XL 272.
[5] Wien, HHSTA PA XII 209.
[6] Wien, KA AOK NA 1915 Karton 3529.
[7] Wien, HHSTA PA XII 211.
[8] Wien, HHSTA PA XII 209.
[9] Wien, HHSTA PA XII 463.
[10] Wien, HHSTA PA XL 272.
[11] Այդ մասին տե՛ս Artem Ohandjanian. Armenien, Der verschwiegene Völkermond. Böhlau. Verlag Wien. Köln. Graz. 1989, էջ 109:
[12] Wien, HHSTA PA XII 209.
[13] Wien, HHSTA PA XII 463.
[14] Wien, HHSTA PA XII 209.
[15] Wien, HHSTA X 155.
[16] Wien, HHSTA PL 192.
[17] Artem Ohandjanian, նշվ. աշխ, էջ 126:
[18] Wien, HHSTA PA X 155.
[19] Wien, HHSTA PA X 157 (Beilage).
[20] Wien, HHSTA PA X 157.

N 1
Ծածկագիր հեռագիր

Հաղորդված է զինվորական կցորդի կողմից

Բանակի շտաբին
Հանձնված է հաշվառման բյուրո

Թիվ 235

Կոստանդնուպոլսում
1914թ. օգոստոսի 8-ին
երեկոյան ժամը 6 անց 50-ին
Վիեննա
1914թ. օգոստոսի 9-ին ժամը 12-ին
Մուտքի թիվը 18/457B
1914 օգոստոսի 8

Նոր տեղաբաշխումներ. 2-րդ բանակը բաղկացած է թիվ V, VIII, X,XII կորպուսներից, այնուհետև IX կորպուսի մեկ դիվիզիայից և XI կորպուսի երկու դիվիզիայից:

Տեքստ. Բանակի գլխավոր հրամանատարն է պաշտպանության մինիստր Էնվեր փաշան: ... Բանակների գլխավոր շտաբների և բոլոր կորպուսների շտաբների պետերն ամբողջապես գերմանացի սպաներ են. Դարդանելի պարետն է գեներալ Վերերը:

Հուսալի հաղորդման համաձայն.

Երկաթուղով օրական 8 գնացք յուրաքանչյուր ուղղությամբ: Ամեն մի կորպուսին 120 գնացք (էշելոն) է անհրաժեշտ: I բանակի II կորպուսը 17-ին, մնացած բոլոր կորպուսները (I, III, IV, VI) զորահավաքի 36-րդ օրը գործելու պատրաստ պիտի լինեն Աղրիանապոլսի մոտ: Այնտեղից Բուլղարիային կարող է ամենից առաջ աջակցել միայն II կորպուսը:

2-րդ բանակի զորահավաքը տակավին որոշված չէ, բայց հույս կա, որ թիվ V, VIII և X կորպուսները 5 շաբաթ հետո պատրաստ կլինեն Օդեսայի դեմ հնարավոր գործողությունների համար: I բանակի զորահավաքի հաջողությունն անսպասելիորեն մեծ է:

I բանակի կորպուսների զումարտակները պատրաստ են մարտի և յուրաքանչյուրն ունի 80 բեռնատար անասուն:

Գերմանացի սպաներն այժմ շատ հուսալի են երևում,

Պոմիանկովսկի.

Վերծանված է 1914թ. 9/8-ին ժամը 2-ին
B թիվ 9/23
Հեռագրի բնօրինակն այրել են:

Wien, KA AOK NA K 3509
Kriegsarchiv (KA), Armeeoberkommando Nachrichtenabteilung (AOK NA), Karton (K) 3509.

N 2
Ավստրո-Հունգարական դեսպանություն Կոստանդնուպոլիս

19 նոյեմբերի, 1914

Գաղտնի

Արևելյան քաղաքականության նպատակը
Թուրքիայի կապակցությամբ

Նորին գերազանցություն արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր Բերխտոլդին

Տարիներ ի վեր ես իմ զեկույցներում այն տեսակետն եմ հայտնել, որ Եռյակ դաշինքի համար արևելյան քաղաքականության գլխավոր նպատակը Թուրքիային ուժեղացնելը, նրան միաժամանակ որևէ կերպ Եռյակ դաշինքի հովանավորության տակ բերելը պետք է լինի, որպեսզի այնուհետև այդ իրավիճակից ոչ միայն քաղաքական, այլև նշանակալի տնտեսական օգուտներ կարողանանք քաղել: Այս տեսակետից՝ ես դեմ եմ եղել մշտապես թուրքական տարածքները շահերի ոլորտների բաժանելու գաղափարին, որն, ըստ իս, ոչ այլ ինչ, քան Թուրքիայի մոտ ապագայում բաժանման հիմք կլիներ:

Ներկա պատերազմը ծագելուց տակավին շատ առաջ Ձնրդ գերազանցությունը մեր քաղաքականությանն ուղղել է միապետության հետ Թուրքիայի սերտ հարաբերությունների, Եռյակ դաշինքի տերությունների հետ Թուրքիայի միավորման ուղղությամբ: Դա, բնականաբար, ենթադրում էր, որ Բեռլինի կառավարությունը կկարողանար այդօրինակ քաղաքականությանը հավանություն տալ: Սակայն այդ ժամանակ [դեպքերի ընթացքն] այնքան հունասեր ընթացք ուներ, որ Թուրքիան Գերմանիայի հետ ավելի սերտ միավորելու հաջողության հեռանկարները խիստ սահմանափակ էին: Միայն պատերազմ բռնկվելուց անմիջապես առաջ քաղաքական իրավիճակը նպաստեց, որ Բեռլինի կառավարությունն իր սեփական շահերն ավելի լավ գիտակցի: Անմիջական հետևանքն եղավ նաև Թուրքիայի մերձենալն, այնուհետև գաղտնի պայմանագրի կնքումը Գերմանիայի և Թուրքիայի միջև, որին միացել է միապետությունը, և, ի վերջո՝ երկու կենտրոնական տերությունների կողմից պատերազմի մեջ վերջերս Թուրքիային ակտիվ ներքաշելը:

Այն պահին, երբ Թուրքիան միապետության և Գերմանիայի հետ պայմանագրային սերտ հարաբերություններ հաստատեց, մենք գտնվում էինք մեր առաջ դրած նպատակին հասնելու ճանապարհի կեսին՝ Թուրքիան մեր պաշտպանության տակ առնելու և որևէ ձևի պրոտեկտորատ հաստատելու առումով: Ավստրո-Հունգարիան և Գերմանիան այսօր Թուրքիան իրենց իշխանությանն են ենթարկել: Այն, որ Գերմանիայի դեպքում ավելի մեծ չափով է դա դրսևորվում, բացատրվում է այն պարագայով, որ վերջինս [Գերմանիան] իր ձեռքում է պահում թուրքական բանակը և նավատորմը: Դրանից զատ, գերմանական կառավարության տրամադրության տակ գտնվող հույժ նշանակալից դրամական միջոցները հնարավորություն են ընձեռում այստեղ իրենց կամքն իրականացնել:

Գերմանիան այս ծանրակշիռ դիրքն օգտագործել կկամենա բոլոր առումներով, և ես երկյուղում եմ, որ մենք, միայն մեզ ապավինած, ի զորու

չենք լինի դիմակայել Գերմանիայի մրցակցությանը և մենք ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական բազում օգուտներից զուրկ կմնանք, որոնք պիտի մեզ Թուրքիայի նկատմամբ գերիշխանություն բերեն:

Արդեն այժմ բազմաթիվ հանգամանքներից երևում է, որ գերմանացիները դիտում են Թուրքիան որպես իրենց գործունեության բացառիկ բնագավառ և իրենց, յուրաքանչյուր պարագայում, Թուրքիայի տեր են ներկայացնում:

Ուստի ես՝ մեր տեսակետից շատ օգտավետ կհամարեի, եթե Թուրքիայի սերտ մերձեցումը ոչ միայն կենտրոնական տերությունների, այլ ամբողջ Եռյակ դաշինքի տերությունների նկատմամբ իրականացվի: Իտալիայի գերադասելի դիրքը մեծապես դյուրին կդարձնի ընդդիմանալը գերմանացիների նկրտումներին: Դրանից հետո մեզ ավելի հեշտ կլինի ապահով դիրք ձեռք բերել և այն ամրապնդել: Ինձ նույնիսկ հնարավոր է թվում, որ Եռյակ դաշինքի տերություններն, առանց փաստացի շահերի ոլորտի բաժանում կատարելու, կկարողանան գործնական և ոչ թե քաղաքական պատճառներից ելնելով միմյանց միջև որևէ համաձայնության գալ, թուրքական կայսրության տարածքն առաջին հերթին առանձին պետությունների տնտեսական գործունեության շրջանները սահմանելու իմաստով:

Այն օգուտները, որոնք Իտալիան կկարողանա ձեռք բերել Թուրքիայի նկատմամբ այդօրինակ իշխանության սահմանումից, ակնհայտ են: Հակազդեցություն կարող է առաջացնել Իտալիայի համար հույժ կարևոր Միջերկրական ծովի հարցը, սակայն ավելի հավանական է, որ Թուրքիայի միակցումը Եռյակ դաշինքին կհամապատասխանի Իտալիայի շահերին: Ներկայիս պատերազմը հստակորեն ապացուցում է, թե որքան մեծ է Իտալիայի՝ Անգլիայից, այլ կերպ ասած, Միջերկրական ծովում անգլիական ծովային գերիշխանությունից կախյալությունը: Եթե կենտրոնական տերությունների համար պատերազմը բարենպաստ ավարտ ունենա, ապա Գերմանիան, անտարակույս, իր ձեռքը կվերցնի թուրքական նավատորմի խոշորացման և զարգացման գործընթացը: Սակայն դրանից հետո արդեն թուրքական նավատորմը, շնորհիվ իր բազաների նպաստավոր դիրքի, կդառնա Միջերկրական ծովում կարևոր գործոն: Ավստրո-Հունգարական, իտալական և թուրքական միացյալ նավատորմը ցանկացած ժամանակ կդառնա անգլո-ֆրանսիական նավատորմից գերակշիռ:

Այս բոլոր դատողությունները կարող են առաջին հայացքից այն կարծիքը ստեղծել, որ Իտալիայի մուտքի հարցը հեռավոր ապագայի նշանակություն ունեցող հարց է, սակայն ես, ընդհակառակը, կարծում եմ, որ այդ հարցն այսօր հրատապ հետաքրքրություն ունի: Թուրքիան ոչինչ չունի Իտալիայի [Եռյակ դաշինքի մեջ] մտնելու դեմ, նա այդ ցանկանում է մեծապես: Եթե այդ այժմ հաջողվի՝ եթե Բեռլինի կառավարությունը Քառյակ դաշինքի քաղաքականության կողմնակից դառնա, ապա, նկատի առնելով ապագան, Իտալիայի շահերը պահանջում են ներկայիս պատերազմում չեզոք մնալ. ինձ սակայն նույնիսկ անհնարին չի թվում, որ Իտալիայի հեռատես պետական այրերը կարող են հարկադրված լինել տակավին պատերազմի ընթացքում հանդես գալ կենտրոնական տերությունների և Թուրքիայի կողմից:

Միապետության համար Թուրքիայի մուտքը Եռյակ դաշինք այն նշանակությունը կունենա, որ մենք, դրանով իսկ, կհասնեինք պատերազմի

կարևորագույն արդյունքին, քանզի դրա շնորհիվ ապագայում Կոստանդնուպոլսի հարցը մեզ ցանկալի ձևով կլուծվեր:

Կ. և թ. դեսպան
(Պոմիակովսկի) ստորագրություն

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), I 521.

Թիվ 50 *Կոստանդնուպոլիս,*
26/I 1915

Թուրքիան և Հայաստանը

...Աղմուկը, որ գալիս էր ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի սենյակից, վկայում էր այն մասին, որ վերջինս շուտով մեկնելու է Էրզերում: Նրա հանձնարարականը կապված պիտի լիներ հայերի նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքի հետ:

Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն: Քրդերը վերսկսել են կոտորել հայ գյուղացիներին, բայց առանձին գործողություններով, որ կասկած չհարուցեն, թե հայերի կոտորածներն ամենուրեք են իրականացվում:

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), XL 272.

Կ. և թ. ավստրո-հունգարական
հյուպատոսություն *Աղրիանապոլիս*
Աղրիանապոլիս *10 նոյեմբերի, 1915*

Թիվ 100/քաղաքական *Խիստ գաղտնի*

Նյութը. Գերմանատյաց կարծիքը.

Սույն թվականի ծածկագիր-հեռագիր թիվ 26 և 28.
Նորին գերազանցություն կ. և թ. պարոն դեսպան, կոմս Պալավիչինիին
Կոստանդնուպոլսում

Տարբեր հանգամանքներ կան, որոնք շատ վայրերում առաջացրել են գերմանատյաց կարծիք: Այն իրողությունը, որ կառավարման գերատեսչությունների մեծ մասում գերմանացիներն են խորհրդատվական և ղեկավար դիրք գրավում և որ սրանք ո՛չ հույների և ո՛չ էլ հայերի հալածանքները չեն կարողացել կասեցնել, ամենից առաջ այն կարծիքն է առաջացրել, որ այդ հալածանքները Գերմանիայի հանդուրժողականության հետևանքով են տեղի ունեցել: Թուրքիայում գերմանական առևտրի ակնկալվող էքսպանսիայի առումով անհրաժեշտ է համարվել, որ մրցունակ բոլոր տարրերը վերացնելու միջոցով այդ էքսպանսիայի համար ճանապարհներ պիտի հարթել: Այն պարագան, որ գերմանացի սպաները ներկա են գտնվել քրիստոնյաներին Ուզուն-Քեուպրյուից աքսորելու ժա-

մանակ և մատը մատին չեն զարկել դա կանխելու համար՝ նոր առիթ տվեց արդեն գոյություն ունեցող այդ կարծիքին:

Ես արդեն ս.թ. 21/ IX-ի թիվ 73/քաղաքական իմ զեկուցագրում նշել եմ Գերմանիայի հանդեպ թշնամական պրոպագանդա սկսվելու մասին, որն առնչվում է Բուլղարիային տարածք հատկացնելու հետ: Իմ զեկուցած վերջին փաստերը վկայում են, որ այդ պրոպագանդան չի նվազել, այլ, ընդհակառակը, սաստկացել է: Ցավոք մինչև օրս հնարավոր չէր իմ երաշխավորյալ անձին դրդել հիշատակել այն անձանց անունները, ովքեր ուղղակի հայտարարել են, որ Գերմանիան կամեցել է հայերի հալածանքները: Նա կարողացավ ինձ միայն հավաստել, որ խոսքը վերաբերվում է մի ազդեցիկ անձնավորության, որը Կոմիտեի հետ սերտ առնչություն ունի և բոլոր գաղտնիքները գիտի:

Սեփական կարծիքի բացակայության և ինքնուրույն դատողությունների և արարքների սակավության պայմաններում, որը մեծապես բնորոշ է, ընդհանրապես, Թուրքիային, բնական է, որ յուրաքանչյուր իրողության դեմ կամ կողմ կարծիք նախ պիտի կազմավորել: Ես համոզված եմ, որ այս ամբողջ հակագերմանական շարժումը ծայր է առնում Կոմիտեից: Կոմիտեի որևէ անդամ երբեք իրեն թույլ չէր տա կարծիք արտահայտել, որը չէր համապատասխանի «Mot d Ordre»-ին (հրամանին):

Բոլոր հարցերում գլխավոր սադրիչները Գանի բեյը և, հատկապես, Սերվետ բեյն են: Վերջինս երրորդ անձնավորության ներկայությամբ արտահայտվել է, որ դաշնակից կայսրությունն իր հաջողություններով շնորհապարտ է լինելու Թուրքիային և հասկանալ է տվել, որ հիմա տակավին գերմանացիների կարիքն ունեն, սակայն հետագայում վերջիններս պիտի Թուրքիան լքեն:

Վիեննա ես չեմ զեկուցում.

Կ. և թ. հյուպատոս
ստորագրություն
(Նաղամլենցկի)

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), XII 209.

Թիվ 9242 *Հեռագիր*
5 հունիսի 1918 *Գաղտնի*

Կոմս Պալավիչինիին
N 340

Բերա
30 մայիսի, 1918
Ընդունված է ժամը 9-ին
Հաղորդված է ժամը 7-ին
31/5
Հույժ գաղտնի

Ծածկագիր
Երեկվա թիվ 337 այստեղի պաշտոնական հեռագիր

Ես այսօր արտաքին գործերի մինիստրի ներկայությամբ զրույց եմ ունեցել մեծ վեզիրի հետ Ձերդ գերազանցության այս ամսվա թիվ 234 հեռագրի մեջ արծարծված նյութի շուրջ:

Գերմանիայի դեսպանը երեկ ինձ ասաց, որ ինքը թեև հիշյալ հրահանգը ստացել է, սակայն եթե նույնիսկ նա հրահանգի ոգով այստեղի պետական այրերի հետ խոսել է, այդուհանդերձ մինչև երեկ ստույգ կետ առ կետ հաղորդագրություն չի արվել: Նա ասում էր, որ ինքն այսօր, վաղ առավոտյան, մեծ վեզիրի հետ իմ զրույցից առաջ, այցելելու է նրան: Ես դրանից ենթադրեցի, որ նա իր ստացած հրահանգն այսօր պիտի ի կատար ածի:

Իրոք, իմ գերմանացի գործընկերն այսօր վաղ առավոտյան զրույց է ունեցել մեծ վեզիրի հետ, նախքան վերջինիս իմ կողմից այցելելը:

Սակայն, երբ ես ասում էի, որ ես հանձնարարության համաձայն սատարելու եմ գերմանացիների հրահանգները, Թալեաթ փաշան, նաև արտաքին գործերի մինիստրը, պնդում էին, որ գերմանացի դեսպանը, ցարդ, նմանօրինակ ձևական քայլ չի արել:

Մեծ վեզիրը, դրանից զատ, ավելացրեց, որ կոմս Բեռնսդորֆը ժամանակին հստակորեն պարզաբանել է անդրկովկասյան կառավարությանը տված վերջնագիրը և, որ գերմանական գերագույն հրամանատարությունը «սահմանների ստույգ ճշգրտման» հետ, որի հետևանքով մի տարածաշրջան՝ մինչև Ջուլֆա, խոստացվել է Թուրքիային, լրիվ համաձայն է: Նաև թուրքական բանակի առաջխաղացումը տեղի է ունեցել գերմանական բանակի գերագույն հրամանատարության համաձայնությամբ և, նույնիսկ, գերագույն հրամանատարության ցուցումով:

Ինչպես վերոհիշյալից ակնհայտորեն երևում է, հարկ է ընդունել, որ գերմանական բանակի գերագույն հրամանատարության և արտաքին գործերի նախարարության միջև առկա է տարակարծություն և որ պետական գերագույն այս ատյաններից յուրաքանչյուրը Կովկասի առումով իր սեփական քաղաքականությունն է հետամտում: Այդ դրսևորվում է նաև Գերմանիայի դեսպանի կեցվածքում, որը հարկադրված է խուսանավել երկուսի միջև: Այսօր երեկոյան տեղի է ունենալու իմ գերմանացի գործընկերոջ ևս մեկ զրույցը Մեծ վեզիրի և Էնվեր փաշայի հետ:

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), X 155.

Հավելված՝ Ավստրո-Հունգարիայի դեսպանից՝
Արտաքին գործերի նախարար Ստեփան Բուրիանին

2 սեպտեմբերի, 1918

Արտաքին գործերի մինիստրության
նկատառումները Կովկասի հարցերի վերաբերյալ

Նոթագրություն
Կայսերական կառավարությունը հանձնարարում է Թալեաթ փաշայի հանդեպ Կովկասի հարցերում հետևյալ դիրքը գրավել.

1. Արդահան, Կարս և Բաթում

Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածը Թուրքիային ամենևին իրավունք չի տալիս այդ տարածաշրջանը անեքսիայի ենթարկել, ընդհակառա-

կը, բազմիցս շեշտվել է, որ Ռուսաստանը չի միջամտելու այդ երեք մարզերի պետաիրավական և միջազգային իրավական նոր իրավակարգի հանգամանքներին, այլ՝ թողնում է դրանց բնակչությանը նոր իրավակարգ իրականացնել դրացի պետությունների, հատկապես՝ Թուրքիայի, համաձայնությամբ: Մինչդեռ Թուրքիան այդ մարզերը միակցել է իր կազմին սոսկ հանրաքվեի հիման վրա, որի լրջությունը կասկածի տեղիք է տալիս: Դաշնակիցները, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրողներ, իրավունք ունեն ստուգել հանրաքվեի օրինականությունը և հարկ եղած դեպքում՝ բողոքարկել: Սակայն հնարավոր է հանձնարարել, որ թուրք դաշնակցին ընդառաջելու միտումից ելնելով, հրաժարվել դրանից:

2. Վրաստան

Այն իրողությունից հետո, երբ Ռուսաստանը լրացուցիչ պայմանագրի 13-րդ հոդվածով իր համաձայնությունը տվեց Վրաստանը որպես ինքնուրույն պետականություն ճանաչելուն, այլևս ոչ մի խոչընդոտ չկա մոտ ապագայում լրացուցիչ պայմանագիրը վավերացնելուց հետո հռչակել այդ ճանաչումը. Թալեաթ փաշան կամենում է, որ մենք առայժմ այդ առթիվ հապաղենք: Այդ հապաղումը կարող է տևել մինչև մեծ վեզիրի հետ մտքերի փոխանակումը:

Բաթումի հաշտության պայմանագրով, որը վրացիները պարտադրված են համարում, Թուրքիան Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշված սահմաններից ավելի հարկադրել է իրեն զիջել Ախալցխայի և Ախալքալաքի շրջանները: Վրացիները դա համարում են նորաստեղծ պետության համար կյանքի խնդիր: Որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող մենք կկարողանանք պահանջել որպեսզի այդ շրջանները վերադարձվեն վրացիներին: Թալեաթ փաշային ընդառաջելու համար, սակայն, պիտի հանձնարարել այդօրինակ պահանջից ձեռնպահ մնալ, բավարարվել բարի խորհրդով և, ասենք, թուրքերին վրացիների հետ բարեկամաբար միավորվելու խորհուրդ տալ: Ընդ որում մենք կարող ենք մեր միջնորդությունը առաջարկել և, այդ ընդունելու դեպքում, այդ ուղղությամբ ջանքեր գործադրել, որ երկու կողմերը վիճելի տարածաշրջանը երկուսի միջև կես առ կես բաժանեն:

3. Հայաստան

Բաթումի հաշտության պայմանագրով Թուրքիան հայերից ևս Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշած սահմաններից ավելի՝ կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջաններ է զավթել: Երկիրը, որը մնացել է հայերին, շատ փոքր է բնակչությանը կերակրելու համար: Հարյուր հազարավոր հայեր փախել են Վրաստան կամ լեռները: Մենք, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող, պարտավոր ենք պահանջել, որ Թուրքիան հետ քաշվի դեպի Բրեստի նշված սահմանները և փախստական հայերին հնարավորություն ընձեռի վերադառնալ իրենց բնակավայրերը: Թուրքիային խնայելու համար հանձնարարվում է այդօրինակ պահանջից հրաժարվել և սահմանափակվել սոսկ թուրքական գործողությունների դեմ առարկությամբ, սակայն՝ առանց այդ առարկություններին հետևող գործողությունների: Ընդսմին, այնուամենայնիվ, Թալեաթ փաշայի ուշադրությունը [պետք է] հրավիրել այն պարագայի վրա, որ մենք ո՛չ հայկական պետության ինքնուրույնության ձգտումն ենք սատարում, ո՛չ էլ Հա-

յաստանում Թուրքիայի քաղաքական կամ ռազմական ձեռնարկումներին կարող ենք աջակցություն ցուցաբերել: Թուրքիան գործում է իր սեփական պատասխանատվությամբ և ռիսկով և չի կարողանա մեր օգնության վրա հույս դնել Ռուսաստանի կամ այլ տերությունների հետ բարդություններ առաջանալու դեպքում:

Թուրքիայի և Հայաստանի միջև միջնորդությունից մենք ավելի լավ կլինի խուսափենք, քանզի մենք կարող ենք հայտնվել մի իրավիճակում, երբ պարտավոր կլինենք հայերի, ասել է թե ռուսների, հաշվին թուրքերի սահմանափակ տարածքային նվաճումներին հավանություն տալ և Հայաստանը որպես բանակցություն վարող ինքնուրույն գործոն ճանաչել:

4. Առոեջան

Կովկասյան Ադրբեջանի պրոբլեմից ամենից առաջ, որպես հատուկ կետ, առանձնանում է Բաքվի հարցը: Մենք պիտի պնդենք, որ թուրքերն իրենց զորքերը հետ քաշեն լրացուցիչ պայմանագրի 14-րդ հոդվածով նշված սահմանագծից և այդ սահմանագիծն ապագայում վերստին չխախտեն: Մենք այնուհետև թուրքերին իրազեկ ենք դարձնելու, որ մենք հաստատապես որոշել ենք դաշնակիցների նավթի կարիքները հաշվի առնելով այնտեղ ներխուժած անգլիացիներին փոխարինել գերմանական զորքերով: Քաղաքի վերահանձնումը պետք է փորձել կատարել խաղաղ ճանապարհով, առաջին հերթին՝ սովետական կառավարության օգնությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ռազմական ուժի միջոցով: Եթե անհրաժեշտ լինի ռազմական գործողության դիմել, ապա թուրքերի օգնության վրա հույս չպետք է դնել, ընդհակառակը, ակնկալվում է, որ նրանք պահպանելու են վերը հիշատակված պաշտպանական գիծը: Դրա փոխարեն մենք պատրաստ ենք ինչպես երկու մյուս դաշնակիցներին, այնպես էլ թուրքերին ապահովել համապատասխան մասնակցություն Բաքվում արդյունահանվող նավթին:

Ինչ վերաբերվում է Ադրբեջանի մյուս շրջաններին, ապա մենք նաև այստեղ հրաժարվելու ենք բնակչության անկախության ձգտումը սատարել և նպաստելու ենք Թուրքիայի քաղաքական կամ ռազմական ձեռնարկումներին: Ադրբեջանում ևս Թուրքիան գործում է սեփական պատասխանատվությամբ և ռիսկով, հնարավոր բարդությունների դեպքում՝ առանց մեր օգնության վրա հույս դնելով: Դրանից զատ մենք պետք է պահանջենք, որ մեր գաղութարարներին լավ վերաբերվեն և հնարավորինս հատուցվեն [նրանց կորուստները], իսկ նավթամուղը, ինչպես և երկաթուղին, որը Բաքվից դեպի արևմուտք թաթարների երկրով է անցնում, անհրաժեշտ դեպքում պետք է անվտանգ դարձվեն գերմանական, համապատասխանաբար՝ ավստրո-հունգարական պահակությամբ:

5. Հյուսիսային Կովկաս

Հյուսիսային Կովկասի համար հիմնականում պետք է կիրառել նույն մոտեցումը, ինչ Ադրբեջանի համար, ուրեմն, ոչ մի աջակցություն թուրքական հնարավոր ձեռնարկումներին. թուրքերը դրանց կարող են դիմել լոկ սեփական պատասխանատվությամբ և բարդությունների դեպքում չեն կարող գերմանական օգնության վրա հույս դնել:

Հայաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի համար պատշաճ է, որ մենք այդ տարածաշրջանի անկախության ո՛չ ձևական, ո՛չ էլ դե

ֆակտո ճանաչմանը պարտավոր չենք նպաստելու: Դրան հակառակ, քանի դեռ Ռուսաստանը Անդրկովկասում, բացի Բաքվից, ոչ մի կառավարական իշխանություն չի իրականացնում, ոչ մի խանգարող հանգամանք չկա, որպեսզի մենք, առանց մեր օժանդակության կազմված կամ տակավին կազմելիք հիշյալ երեք պետությունների կառավարությունների հետ մեր տեղական շահերի շուրջ անմիջականորեն բանակցություններ վարենք: Մենք կարող էինք այդ նպատակով, օրինակ, հյուպատոս գործուղել: Ընդհակառակը դեսպանորդների գործուղումն առայժմ տեղի չի ունենա:

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), X 157 (Beilage).